

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ ՍԵՅՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն հայեցակարգն իրենից ներկայացնում է հիմնական դրույթների ամբողջություն, որոնք նպատակաուղղված են շենքերի սեյսմակայունության ապահովման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու և դրանով իսկ բնակչության անվտանգ ու բնականոն կենսագործունեության ուղղությամբ համապատասխան մոտեցումներ ցուցաբերելու գործընթացի իրականացմանը:

2. Հայեցակարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի N 800-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գերակա խնդիրների» 35-րդ կետի՝ «Շենքերի սեյսմակայունության ապահովման հայեցակարգի նախագծի մշակում» գերակա խնդրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սեյսմակայուն շինարարության հիմնախնդիրների քննարկման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի փետրվարի 10-ի N 93-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում:

3. Այն բխում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 10¹-րդ, «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշման 8-րդ կետի 12-րդ ենթակետով ամրագրված Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության խնդիրներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 7-ի «Երևանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N 392 և հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N 429 որոշումներից:

4. Հայեցակարգը հիմք կհանդիսանա Հայաստանի Հանրապետության տարածքում շենքերի սեյսմակայունության ապահովման և սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ հետևողական քաղաքականության վարման և համակարգված գործողությունների իրականացման համար:

II. ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. **Սեյսմակայունություն** - շենքերի և շինությունների դիմադրողականությունը երկրաբաժի ազդեցությանը:

6. **Սեյսմակայունության ապահովում** – հնարավոր ուժեղ երկրաշարժին շենքերի և շինությունների դիմակայելու հատկության ապահովումը:

7. **Սեյսմազինվածություն** – շենքերում և շինություններում որոշակի կոնստրուկտիվ տարրերի և լուծումների առկայություն՝ ուղղված սեյսմակայունության ապահովմանը:

8. **Վերակառուցում** - շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր, ուղղված շենքի կամ կառուցվածքի, դրա առանձին մասերի նոր գործառնական նշանակությամբ օգտագործմանը և/կամ հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխմանը, շենքի կամ կառուցվածքի հուսալիության ապահովմանն ու արդիականացմանը,

III. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Հայեցակարգի նպատակն է շենքերի սեյսմակայունության ապահովման ուղղությամբ արդյունավետ մոտեցումների ցուցաբերման և հիմնավորված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

10. Հայեցակարգի խնդիրներն են՝

1) սեյսմակայուն շինարարության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի դաշտի մշտապես կատարելագործումն ու արդիականացումը,

2) գոյություն ունեցող շենքերի պահանջվող սեյսմակայունության ապահովման համար անհրաժեշտ իրավական և ֆինանսական մեխանիզմների ստեղծմանը նպաստումը,

3) սեյսմակայուն շինարարության ոլորտում փորձարարական ստրուկտորական աշխատանքների իրականացման գործընթացի և գիտատեխնիկական առաջընթացի խթանումը,

4) շենքերի ու շինությունների սեյսմակայունության բարձրացմանն ուղղված նոր մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների մշակման և արտադրությունում ներդրման կազմակերպումն ու համակարգումը,

5) շենքերի անձնագրավորումը և անձնագրային տվյալների միասնական համակարգչային բազայի ստեղծումն ու մշտապես համալրումը,

6) շենքերի սեյսմակայունության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման ուղղությամբ առաջնահերթությունների սահմանումը,

7) շենքերի սեյսմակայունության ապահովմանն ուղղված նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը.

8) շինարարության ոլորտի ինժեներատեխնիկական և բանվորական մասնագիտական կադրերի հետևողական վերապատրաստումն ու մասնագիտական ունակությունների մշտապես կատարելագործումը,

9) բնակչությանը սեյսմիկ վտանգի մակարդակի և սեյսմիկ ռիսկի մեծության, շենքերի սեյսմակայունության բարձրացման և դրանց պահպանման պարտադիր նորմերի կատարման կարևորության մասին հետևողականորեն իրազեկումը:

IV. ՇԵՆՔԵՐԻ ՍԵՅՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿ

11. 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո վերանայվեցին Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ պայմանները, կազմվեցին սեյսմիկ վտանգի նոր քարտեզներ, որոնցում տրվեց սեյսմիկ վտանգի իրական մակարդակը, ինչը հիմք հանդիսացավ 1995 թվականին հանրապետությունում սեյսմակայուն շինարարության ազգային նորմերի մշակման և ընդունման համար:

12. Ներկայումս հանրապետությունում շինարարությունն իրականացվում է սեյսմակայուն շինարարության ազգային նորմերի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի իրական մակարդակը: Սակայն մինչև հանրապետության տարածքի սեյսմիկ պայմանների վերանայումը (1989 թվական) նախագծված և կառուցված շենքերը, մասնավորապես բազմաբնակարան շենքերը, արդեն իսկ սկսեցին չբավարարել արդի սեյսմակայունության պահանջներին: Այս հանգամանքով պայմանավորված հանրապետությունում զգալիորեն մեծ է է սեյսմիկ ռիսկը: Իրավիճակի սրմանը մեծապես նպաստում է նաև այն, որ վերջին 20 տարիների ընթացքում, ֆինանսական միջոցների սղության պատճառով, հանրապետությունում անհրաժեշտ մակարդակով չեն ցուցաբերվել շենքերի պահպանմանն ուղղված համակարգված մոտեցումներ և պահանջվող ծավալով չեն իրականացվել շենքերի վերականգնման ու ուժեղացման աշխատանքներ, որի հետևանքով, ֆիզիկական մաշվածությունից և զանազան այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությունից, շենքերի զգալի մասը հայտնվել են անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում: Նման շենքերը սեյսմակայունության առումով հուսալի չեն և չեն կարող ապահովել բնակչության անվտանգությունը: Քիչ չեն նաև այն շենքերը, որոնցում առկա ընթացիկ վերանորոգում պահանջող թերությունների (ջրագծի կամ կոյուղագծի վնասվածքներ, տանիքի և ջրահեռացման համակարգի անբարեկարգ վիճակ, սավառակների քայքայվածություն և այլն) ոչ ժամանակին վերացումը, կամ բնակիչների կողմից կրող կոնստրուկցիաների ամբողջականության խախտման (բացվածքների իրականացում, բնակարանների ներքին տարածքների և միջհարկային ծածկերի կոնստրուկտիվ ձևափոխություններ) և դրանով իսկ դրանց կրողունակությունը իջեցնող անթույլատրելի միջամտությունները, պատճառ են դարձել շենքի սեյսմակայունության նվազման, անբավարար տեխնիկական վիճակի, իսկ հետագայում նաև վթարայնության առաջացման:

13. Բնակչության սեյսմիկ անվտանգության ապահովման խնդիրը կարող է լուծվել միայն կոմպլեքսային եղանակով: Այդ իսկ պատճառով կարևորվում է շենքերի սեյսմակայունության բարձրացմանն ուղղությամբ համակարգված մոտեցումների ցուցաբերումը, որի արդյունավետությունը մեծապես կախված է նաև սեյսմակայուն շինարարության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի դաշտի կատարելությունից և շենքերի շահագործմանն ու պահպանմանն ուղղված իրավական ու ֆինանսական մեխանիզմների առկայությունից:

V. ՍԵՅՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴԱՇՏԸ

14. Ինչպես արդեն նշվեց վերը՝ հանրապետության տարածքի սեյսմիկ պայմանների վերանայումից հետո մշակվեցին և ընդունվեցին սեյսմակայուն շինարարության առաջին ազգային նորմերը, որոնք հետագայում լրամշակվեցին ելնելով գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներից ու սեյսմակայուն շինարարության բնագավառում կուտակված արտասահմանյան և հայրենական փորձից և գործողության մեջ դրվեցին ՀՀ

քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանով, որպես՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր»>> շինարարական նորմեր:

15. Լրամշակման արդյունքում, ելնելով արդի պահանջներից, շիննորմերում մտցվել են շուրջ 2 տասնյակ լուրջ փոփոխություններ: Փոփոխությունները նպատակաուղղված են շենքերի ու շինությունների սեյսմակայունության բարձրացմանը և համահունչ են միջազգային ասպարեզում այդ ուղղությամբ ցուցաբերվող մոտեցումներին: Հայաստանի սեյսմակայուն շինարարության գործող նորմերն իրենց գիտամեթոդական և ճարտարագիտական հիմնավորվածության մակարդակով չեն զիջում այլ սեյսմակայուն երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի և Ճապոնիայի համապատասխան նորմերին և համաշխարհային շատ հեղինակավոր մասնագետների ու փորձագետների կողմից արժանացել են բարձր գնահատականի:

16. Սեյսմակայուն շինարարության նորմերում «Շենքեր և կառուցվածքներ սեյսմամեկուսացման համակարգերով»>> 10-րդ բաժնի ներառմամբ պայմանավորված լրացուցիչ որոշ իրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն առաջացավ, մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2007 թվականի N 275-Ն հրամանով հաստատվել և գործողության մեջ է դրվել «Սեյսմամեկուսացման շերտավոր ռետինամետաղե հենարանների տեխնիկական վիճակի հետազննության կարգը»>>,

2) Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2007 թվականի N 89-Ա հրամանով հաստատվել և գործողության մեջ է դրվել ՀՍ «Սեյսմամեկուսացման շերտավոր ռետինամետաղական հենարան: Տեխնիկական պայմաններ»>> փաստաթուղթը,

3) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2007 թվականի N 08-Ա հրամանով հաստատվել և գործողության մեջ է դրվել «Ռետինամետաղական շերտավոր հենարանների կիրառմամբ շենքերի նախագծման և կառուցման ցուցումներ»>> փաստաթուղթը:

Այս փաստաթղթերի առկայությունն ամբողջությամբ ապահովում է ռետինամետաղական շերտավոր հենարանների օգնությամբ շենքերի սեյսմամեկուսացման մեթոդի կիրառությունը հանրապետությունում:

17. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանով հաստատվել ու գործողության մեջ են դրվել՝ «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումները»>>: Այն թույլ է տալիս անհրաժեշտ մակարդակով իրականացնել շենքերի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման գործընթացները: Շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում տրված եզրակացությունը հիմք է հանդիսանում վերականգնման սեյսմազինվածության բարձրացման ու ուժեղացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար:

18. Բացի վերը նշված փաստաթղթերից հանրապետությունում գործում են նաև մի շարք այլ նորմատիվատեխնիկական փաստաթղթեր և իրավական ակտեր, որոնց կիրառությունը ներկայումս հնարավորություն է տալիս նախագծման և կառուցման փուլերում լիարժեքորեն ապահովել շենքերի հուսալիությունը:

19. Սեյսմակայուն շինարարության նորմատիվատեխնիկական փաստաթղթերի դաշտը ենթակա է մշտապես կատարելագործման ու արդիականացման, ելնելով բնագավառում գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներից և տարբեր ուղղություններով ձեռք

բերված միջազգային ու հայրենական փորձից: Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1158-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից նախատեսվում է կազմել Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի 1:500000 մասշտաբի հավանականային գնահատմամբ նոր քարտեզ, որը հաստատվելուց հետո կդրվի սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի հիմքում: Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի դաշտի կատարելագործումն ու արդիականացումը պետք է իրականացվի <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

20. Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի դաշտի մշտապես կատարելագործմանը զուգընթաց կարևորություն է ստանում նաև նոր տնտեսական հարաբերությունների պայմաններում շենքերի սեյսմակայունության ապահովմանն ուղղված համապատասխան օրենսդրական մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը:

VI. ՇԵՆՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

21. Սկսած 1989 թվականից Հայաստանի Հանրապետությունում մի շարք էական փոփոխություններ են կատարվել շենքերի շահագործմանն ու պահպանմանն ուղղված օրենսդրական դաշտում, մասնավորապես՝ բնակարանային ֆոնդի վճարովի, ապա անհատույց սեփականաշնորհման ուղղությամբ: Պետական սեփականությունը հաշված տարիների ընթացքում փոխանցվեց մասնավորին՝ հնարավորություն ստեղծելով ձերբազատելու պետությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից շենքերի շահագործմանն ու պահպանմանն ուղղված մեծածավալ դոտացիոն հատկացումների կատարման պարտավորությունից:

22. Միևնույն ժամանակ նոր տնտեսավարման համակարգին անցմանը զուգընթաց չստեղծվեցին արդյունավետ կառավարման համարժեք մեխանիզմներ, որոնք պետք է կոչված լինեին լրացնելու բացը, մոբիլիզացնելու սեփականատերերի միջոցները շենքերի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար, որոնց և անհրաժեշտորեն պետք է գումարվեին պետական աջակցության հստակ ծրագրերը:

23. Բնակարանային տնտեսության բնագավառում իրականացված տնտեսական բարեփոխումներն անհրաժեշտություն առաջացրեցին վերակազմավորել բնակարանային ֆոնդի կառավարման ինստիտուցիոնալ համակարգը: Արդյունքում, որպես բազմաբնակարան շենքի կառավարման առավել արդյունավետ ձև, ընտրվեց սեփականատերերի միությունների կամ համատիրությունների ստեղծումը:

24. Ներկայումս բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսից 27 մլն քառ. մետրը կենտրոնացված է բազմաբնակարան շենքերում, որի 96%-ն իրականացված սեփականաշնորհման արդյունքում սեփականության իրավունքով փոխանցվել է քաղաքացիներին: Մնացած մասը հանձնվել է տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինությանը:

25. 2002 թվականի մայիսի 7-ին ընդունվել են <<Բազմաբնակարան շենքի կառավարման մասին>> և <<Համատիրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքները:

26. <<Բազմաբնակարան շենքի կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը կարգավորում է բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման հարաբերությունները և սահմանում է բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր

բաժնային սեփականության կառավարման կարգը, կառավարման ձևերը, շենքի կառավարման մարմինների իրավասությունները, դրանց կազմավորման, գործունեության, գործունեության դադարման կարգը, ինչպես նաև դրանց փոխհարաբերությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների հետ:

27. <<Համատիրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է համատիրության իրավական կարգավիճակը, համատիրության ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգը, ինչպես նաև նրա փոխհարաբերությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների հետ:

28. Բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրման ու անձնագրավորման խնդիրներում տեղական ինքնակառավարման մարմինների և համատիրությունների հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի <<Բնակելի և հասարակական շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրման ու անձնագրավորման մասին>> N 346 որոշմամբ:

29. ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 1161-Ն որոշմամբ սահմանվել են բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը և բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի պահպանմանը ներկայացվող պահանջները և դրանց ապահովմանն ուղղված վերանորոգման աշխատանքների և կանխարգելիչ միջոցառումների իրականացման առավելագույն ժամկետները:

30. Ըստ վերը նշված որոշումների՝ բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունները պետք է կատարվեն պարբերաբար, բայց ոչ ուշ, քան 10 տարին մեկ անգամ: Նշված ուսումնասիրությունների արդյունքները հիմք պետք է հանդիսանան շենքերի պահպանման ուղղությամբ համապատասխան մոտեցումներ ցուցաբերելու հարցում որոշում կայացնելու համար, սակայն, հիմնականում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, նշված որոշումներով ամրագրված պահանջներն անհրաժեշտ մակարդակով չեն իրականացվում, ինչը նույնպես նպաստում է շենքերի տեխնիկական վիճակի հետագա վատթարացմանը և հետևաբար սեյսմակայունության նվազմանը:

31. Բնակարանային ֆոնդը հանդիսանում է երկրի առանցքային ակտիվներից մեկը և պետությունը շահագրգռված է պահանջվող մակարդակով դրա պահպանումն իրականացնելու հարցում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի <<Վերականգնման ենթակա բազմաբնակարան շենքերի բնակարանների սեփականատերերին պետական ֆինանսական աջակցության տրամադրման հայեցակարգի մասին>> N 2165-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին>> N 682 որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի նիստի N 38 արձանագրության 18-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագրով>> և 2013 թվականի մարտի 7-ի նիստի N 9 արձանագրության 20-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման հայեցակարգով>> պետությունն արդեն իսկ որոշակի պարտավորություններ է

կրում շենքերի վերականգնման, ուժեղացման և վթարային շենքերից բնակիչների վերաբնակեցման հարցերում:

32. Նշված փաստաթղթերով նախատեսված միջոցառումները պահանջում են մեծածավալ ֆինանսական ներդրումներ և չեն կարող իրականացվել միայն պետական աջակցության ծրագրերի շրջանակներում: Ուստի լուրջ և կարևոր խնդիր է հանդիսանում բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործումը և կառավարման նոր մոդելի ներդրումը, ինչը թույլ կտա հստակեցնել շենքերի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման և աշխատանքների ֆինանսավորման մեխանիզմները:

33. Այս գործընթացին էական խթան կարող է հանդիսանալ նաև շենքերի պարտադիր ապահովագրության համակարգի ներդրումը, միջոցառումների իրականացման վարկավորման, ինչպես նաև կուտակային ֆոնդերի ստեղծման նպատակով հարկերի հավաքագրման ճկուն մեխանիզմների ստեղծումը:

34. Այդ նպատակին կարող է ծառայել նաև շենքերի վերակառուցման միջոցով դրանց սեյսմակայունությունը բարձրացնող տարբեր մեթոդների կիրառմամբ լրացուցիչ օգտագործելի տարածքների ստեղծումը և դրանց իրացման կամ վարձակալության հանձնման միջոցով լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթհայթումը:

VII. ՇԵՆՔԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

35. Շենքերի պահպանման և հուսալիության բարձրացման ուղղությամբ համակարգված մոտեցումներ ցուցաբերելու, հիմնավորված և արդյունավետ միջոցառումների ծրագրեր մշակելու ու իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել դրանց անձնագրավորում: Շենքի անձնագիրը հանդիսանում է տեխնիկական փաստաթուղթ, որում բերվում են տվյալներ շենքի տեղեկատվական և կոնստրուկտիվ բնութագրերի վերաբերյալ: Անձնագրավորման հիմնական խնդիրը շենքի տեխնիկական վիճակի գնահատումն է դրա սեյսմակայունության տեսանկյունից: Հիմնական բնութագրերից բացի անձնագրում բերվում են նաև շենքի կոնստրուկցիաներում, ինժեներական համակարգերում ու ենթակառուցվածքներում առկա վնասվածքների նկարագրությունը, դրանց առաջացման պատճառները, ինչպես նաև եզրահանգումներ շենքի հետագա շահագործման, առանձին կոնստրուկցիաների և շենքի ընդհանուր ուժեղացման կամ քանդման անհրաժեշտության վերաբերյալ:

36. Շենքերի անձնագրավորման գործընթացի իրականացումը հիմք կհանդիսանա անձնագրային տվյալների միասնական տեղեկատվական համակարգչային բազայի ձևավորման համար, ինչն իր հերթին հնարավորություն կտա կատարել անհրաժեշտ վերլուծություններ՝ շենքերում առկա տեխնիկական խնդիրների վերհանման, ըստ նմանատիպության դրանց խմբավորման և ըստ կարևորության դրանց լուծման առաջնահերթությունների որոշման ուղղությամբ, որոնց արդյունքները ելակետային կհանդիսանան ինչպես շենքերի սեյսմակայունության ապահովման, այնպես էլ մի շարք ոլորտներում առկա խնդիրների նկատմամբ համակարգված մոտեցումների ցուցաբերման համար:

37. Շենքերի անձնագրավորումը և անձնագրային տվյալների միասնական տեղեկատվական համակարգչային բազայի ստեղծումը՝

1) կբարձրացնի հետագա տարիներին շենքերի տեխնիկական վիճակի հետազննությունների կատարման արդյունավետությունը, կնպաստի շենքերի

վնասվածության գնահատման, վերակառուցման անհրաժեշտ մակարդակի որոշման, իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման գործընթացին՝ առավելություն տալով կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը,

2) անհրաժեշտ հիմք կհանդիսանա հանրապետությունում ընդհանուր առմամբ, սեյսմիկ ռիսկի իրական գնահատականը տալու նպատակով վերլուծությունների կատարման և արտակարգ իրավիճակներում օպերատիվ գործողությունների իրականացման ուղղությամբ հիմնավորված ծրագրերի մշակման համար,

3) թույլ կտա հայտնաբերել անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերը և առաջնահերթության հաշվառմամբ, փուլ առ փուլ իրականացնել դրանց վերականգնման ու ուժեղացման առավել հիմնավորված ծրագրեր, դրանով իսկ բարձրացնելով գործընթացի արդյունավետությունը,

4) թույլ կտա հայտնաբերել վթարային և բնակության համար ոչ պիտանի շենքերը և դրանց նկատմամբ ցուցաբերել համակարգված մոտեցումներ: Այս գործընթացը հնարավորություն կտա հանրապետության բնակավայրերի տարածքային սուղ պայմաններում աստիճանաբար նորացնել բնակարանային ֆոնդը այն փոխարինելով ճարտարապետական ժամանակակից լուծումներով և սեյսմակայունության առումով ներկայիս պահանջներին բավարարող շենքերով,

5) կնպաստի ճարտարապետական և պատմամշակույթային արժեք ներկայացնող, մասնավորապես՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հանդիսացող, շենքերի պահպանմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին,

6) անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի՝ շենքերի վնասվածության աստիճանի հաշվառմամբ սոցիալական ծրագրերի իրականացման, գույքահարկի վճարներից համայնքային բյուջեների եկամտային մասի ձևավորման, ինչպես նաև մի շարք այլ ոլորտներում ծրագրավորված միջոցառումների իրականացման ժամանակ առաջացող լուրջ խնդիրների հստակեցման համար:

XIII. ՇԵՆՔԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄՈՏԵԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. Շենքերի սեյսմակայունության բարձրացման նպատակով ցուցաբերվող մոտեցումները պետք է ապահովեն նոր կառուցվող, գոյություն ունեցող և շահագործվող, ինչպես նաև շինհրապարակում գտնվող շենքերի հուսալիությունը՝ տվյալ տարածքի սեյսմիկ վտանգի մակարդակին համապատասխան: Այս խնդրի լուծման մեթոդաբանությունը պետք է հիմնված լինի սեյսմակայուն շինարարության նորմատիվատեխնիկական փաստաթղթերով ամրագրված պահանջների, ինչպես նաև սեյսմակայուն շինարարության բնագավառի առաջադեմ փորձի վրա:

39. Ներկայումս հանրապետության շենքերի գերակշռող մասը, հիմնականում բազմաբնակարան ֆոնդի շուրջ 2 տասնյակ հազարի հասնող շենքեր, չեն համապատասխանում սեյսմակայուն շինարարության գործող նորմերի պահանջներին և ուժեղացման միջոցառումների իրականացման կարիք ունեն: 2013 թվականի դրությամբ միայն բազմաբնակարան շենքերի թվում 421 շենք ունի 3-րդ աստիճանի վնասվածություն (անբավարար տեխնիկական վիճակ) և ենթակա են վերականգնման ու ուժեղացման, 26 շենք ունի 4-րդ աստիճանի վնասվածություն (վթարային տեխնիկական վիճակ) որոնց բնակիչները ենթակա են վերաբնակեցման: Այս շենքերում հիմնականում բնակվում է բնակչության սոցիալապես անապահով խավը և դրանց նկատմամբ համապատասխան մոտեցումների ցուցաբերումը պահանջում է պետական աջակցություն:

40. Ինքնին հասկանալի է, որ նման քանակությամբ շենքերի վերականգնումն ու ուժեղացումը, հաշվի առնելով նաև վթարային շենքերից բնակչության վերաբնակեցման հետ կապված խնդիրների առկայությունը, կպահանջի հսկայական ֆինանսական ներդրումներ և տասնյակ տարիների ժամանակահատված, ինչը, ներկայիս տնտեսական հնարավորությունների պայմաններում, անիրատեսական է դարձնում պահանջվող ծավալով միջոցառումների իրականացումը: Միայն 3-րդ աստիճանի վնասվածության 421 բազմաբնակարան շենքերի վերականգնման ու ուժեղացման համար, խոշորացված հաշվարկներով, կպահանջվի շուրջ 250 մլրդ ՀՀ դրամ գումար և ներկայիս տնտեսական պայմաններում դա հնարավոր կլինի իրականացնել ոչ պակաս քան 30 տարում: Բացի այդ, հանրապետությունում շահագործվող բնակարանային ֆոնդը հիմնականում կառուցվել է 1960-1980-ական թվականներին, որից անցել է շուրջ 40-50 տարի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնիսկ շենքերի պահպանման պարտադիր նորմերի կատարման դեպքում դրանց ծառայության ժամկետ է սահմանված միջինը 100 տարին, հասկանալի է դառնում, որ այդ շենքերն արդեն իսկ կիսով չափ սպառել են իրենց ծառայության ռեսուրսը և տասնյակ տարիներ հետո դրանց ուժեղացումը տեխնիկատնտեսական առումով լավագույն դեպքում կարող է գնահատվել աննպատակահարմար: Բնակելի շենքերի դասակարգումն ըստ հիմնարարության բերված է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանով հաստատված ու գործողության մեջ դրված՝ «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներում»:

41. Հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև նկատի ունենալով վթարային շենքերից բնակիչների վերաբնակեցման հետ կապված խնդիրները, համապատասխան մոտեցումներ ցուցաբերելու համար շենքերի նկատմամբ առաջնահերթություն սահմանելու խիստ պահանջ է առաջանում:

42. Հայեցակարգով առաջարկվում է անվտանգության նկատառումներից ելնելով առաջնահերթ դիտարկել՝

1) վթարային բազմաբնակարան շենքերից բնակիչների վերաբնակեցման հարցը՝ նախապատվությունը տալով այն շենքերին, որտեղ բնակիչներին ժամանակավոր կացարաններով ապահովելու պահանջարկ չի առաջանում: Այս խնդրի լուծմանը կարելի է հասնել սոցիալական բնակարանների կառուցմամբ բնակիչների պարբերաբար վերաբնակեցման միջոցով նախապես ստեղծելով որոշակի փոխանակման ֆոնդ:

2) Վերականգնման ու ուժեղացման ենթակա շենքերում համապատասխան միջոցառումներ իրականացնելիս, ըստ առաջնահերթության նախապատվությունը տալ՝

ա. պետական կառավարման համակարգի շենքերին, որտեղից պետք է կորոդինացնեն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերը,

բ. բնակչության բնականոն կենսագործունեությունը ապահովող օբյեկտների շենքերին,

գ. անչափահաս երեխաների և բնակչության սակավ շարժունակ խմբերի սպասարկման համար նախատեսված օբյեկտների շենքերին,

դ. մարդկանց մասսայական գտնվելու համար նախատեսված օբյեկտների շենքերին,

ե. շենքերին, որոնցում կարող են հանգրվանել և առաջին օգնություն ստանալ երկրաշաժից վնասվածքներ ստացած և անօթևան մնացած մարդիկ,

զ. հատուկ բարձր ազգային արժեք ներկայացնող օբյեկտների շենքերին,

է. մարդկության համար պոտենցիալ վտանգ ներկայացնող օբյեկտների շենքերին,

ը. բազմաբնակարան շենքերին:

43. 42-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունում նշված հատուկ բարձր ազգային արժեք ներկայացնող օբյեկտների շենքերին միջամտելիս, պատմության և մշակույթի

անշարժ հուշարձաններ հանդիսացող շենքերում աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան:

44. Բազմաբնակարան շենքերի վերականգնման ու ուժեղացման միջոցառումների իրականացման հնարավորությունը հիմնականում պետք է դիտարկել սեփականատերերի միջոցների հաշվին՝ անհրաժեշտ իրավական մեխանիզմներ ստեղծելով սեփականատերերի կողմից այդ ուղղությամբ կուտակային ֆոնդերի ձևավորման և համատիրությունների վարկավորման ճկուն համակարգի ներդրման ուղղությամբ, որին կգումարվեն նաև պետական աջակցության ծրագրերի շրջանակներում հատկացումները:

45. Բազմաբնակարան շենքերում վերականգնման ու ուժեղացման միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրերում կընդգրկվեն հիմնականում այն շենքերը, որոնք կունենան սահմանված ժամկետի հաշվառմամբ հաստատված տեխնիկական անձնագրեր:

46. Շենքերի ուժեղացման ծրագրեր մշակելիս առաջարկվում է ղեկավարվել ՀՀ վարչապետի 2012 թվականի փետրվարի 10-ի N 93-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշակված շենքերի տիպերի առաջնահերթությամբ՝

1) երկաթբետոնե կարկասային շենքեր

ա. 111 սերիա իր բոլոր մոդիֆիկացիաներով,

բ. 8-11 հարկանի, սնամեջ սյուներով կոնստրուկտիվ համակարգերով շենքեր (հեղինակ Յու. Դալլաքյան),

գ. ԻԻՍ-04 կոնստրուկտիվ համակարգերով շենքեր,

դ. հարկերի բարձրացման մեթոդով շենքեր,

ե. Երևաննախագիծ ինստիտուտի կողմից մշակված 10-13 հարկանի շենքեր (հեղինակ Առաքել Առաքելյան),

զ. գծային տարրերով կոնստրուկտիվ համակարգերով շենքեր, (հեղինակ Ժ. Մանուկյան),

է. հավաքովի-միաձույլ տարածական համակարգով շենքեր (հեղինակ Ռ. Բադալյան),

ը. ոչ տիպային (անհատական) կոնստրուկտիվ համակարգերով շենքեր:

2) քարե կրող համակարգերով շենքեր

ա. 1Ա-450 և 1Ա-451 սերիաներ իր բոլոր մոդիֆիկացիաներով,

բ. բոլոր 3 և ավելի հարկերով ոչ տիպային (անհատական) համակարգերով կառուցված շենքեր:

3) խոշորապանել շենքեր

ա. 129 սերիա իր մոդիֆիկացիաներով,

բ. 464 Ս սերիա (կասետային),

գ. Ա1-451-ԿՊ սերիա իր մոդիֆիկացիաներով:

IX. ՇԵՆՔԵՐԻ ՍԵՅՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

47. Շենքերի սեյսմակայունության բարձրացման եղանակներն ու մեթոդները պետք է նպատակաուղղված լինեն կառուցման, վերակառուցման, վերականգնման և ուժեղացման ժամանակ դրանց հուսալիության և հետագա բնականոն ու անվտանգ շահագործման ապահովմանը:

48. Շենքերի վերակառուցման մակարդակը յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է որոշվի դրա տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում՝ սեյսմիկ խոցելիության

գնահատման հաշվառմամբ, ելնելով վերակառուցման միջոցառումների իրականացման տեխնիկատնտեսական նպատակահարմարությունից և հաշվի առնելով նաև հիմնատակի գրունտների բնութագրերը:

49. Շենքերի վերակառուցումը մեծամասնաբար ենթադրում է աշխատանքների իրականացում, որոնք պահանջում են կրող կոնստրուկցիաների տեխնիկական բնութագրերի փոփոխում և հանդիսանում է առավել բարդ խնդիր քան շինարարությունը սկսած զրոյական նիշից: Այդ իսկ պատճառով գոյություն ունեցող շենքերի վերակառուցման մակարդակի որոշումը և դրա իրականացման եղանակի կամ մեթոդի ընտրությունը պահանջում է անհրաժեշտ ծավալով հետազննությունների իրականացում և համապատասխան հաշվարկների կատարում՝ հաշվի առնելով նաև սեյսմիկ խոցելիության գնահատականը: Շենքերի վերակառուցման ժամանակ նախապատվությունը պետք է տրվի այն մեթոդներին, որոնք հնարավորություն են տալիս շինարարական աշխատանքներն իրականացնել առանց բնակիչների տեղահանման:

50. Շենքերի վերակառուցման նախագծերը պետք է ենթարկվեն մասնագիտական անկախ փորձաքննության, իսկ շինարարական աշխատանքներն իրականացվեն հեղինակային հսկողության և շինարարության որակի տեխնիկական հսկողության ներքո:

51. Չնայած շենքերի կոնստրուկցիաների զանազանությանը, գոյություն ունեն դրանց ուժեղացման որոշակի ավանդական եղանակներ, որոնք կարող են օգտագործվել շինարարական աշխատանքների ժամանակ, մասնավորապես՝

- 1) կրող կոնստրուկցիաների էլեմենտների կտրվածքների մեծացումը,
- 2) կոշտության էլեմենտների ներառումը՝ կրող կոնստրուկցիաների և առանձին էլեմենտների հաշվարկային երկարությունը նվազեցնելու և կայունությունը բարձրացնելու նպատակով,
- 3) գրունտներում ստեղծվող պաշտպանիչ (մարիչ) էկրանների իրականացումը,
- 4) կրող կոնստրուկցիաների պարփակումը երկաթբետոնե շապիկներով՝ տորկրետ բետոնի իրականացմամբ,
- 5) հիմնական կրող կարկասի հետ կոշտ կամ հողակապային միացում ունեցող պատշգամբների իրականացմամբ,
- 6) կոնստրուկցիաների բեռնաթափումը՝ ծանր էլեմենտներն առավել թեթև էլեմենտներով փոխարինելու միջոցով,
- 7) կոնստրուկցիաներում ճաքերի և առանձին էլեմենտների կցվանքների մոնոլիտացումը,
- 8) վնասված տարրերի նոր էլեմենտներով փոխարինումը, և այլն:

52. Վերը նշված ավանդական եղանակներից բացի շենքերի սեյսմակայունության ապահովման և սեյսմազինվածության բարձրացման նպատակով կարող են օգտագործվել նաև այլ մեթոդներ, որոնց կիրառությունը կարող է առավել արդյունավետ և տնտեսապես առավել նպատակահարմար դարձնել շենքերի ուժեղացման կամ սեյսմազինվածության բարձրացման աշխատանքների իրականացումը, իսկ առանձին դեպքերում նաև հանդիսանալ միակ արդարացված տարբերակը:

53. Նման մեթոդների թվին են դասվում սեյսմապաշտպանության հատուկ համակարգերի օգնությամբ շենքերի սեյսմակայունության բարձրացմանն ուղղված միջոցառումները: Սեյսմակայուն շինարարության նորմերով թույլատրվում է նոր կառուցվող շենքերը նախագծելիս և գոյություն ունեցող շենքերն ուժեղացնելիս կիրառել սեյսմապաշտպանության հատուկ համակարգեր (տատանումների դինամիկական մարիչներ, մարումը բարձրացնող կոնստրուկցիաներ, սեյսմամեկուսացում՝ ռետինամետաղե շերտավոր հենարանների օգնությամբ, գոյություն ունեցող շենքի միացում նորակառուց կոշտ կցակառուցի հետ և այլն):

54. Ինչպես նշվեց վերը՝ հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի դաշտն ամբողջությամբ ապահովում է հիմքի մակարդակում ռետինամետաղական շերտավոր հենարանների օգնությամբ շենքերի սեյսմամեկուսացման մեթոդի կիրառությունը հանրապետությունում, որը հիմնականում թույլ է տալիս շենքերի ուժեղացման աշխատանքներն իրականացնել առավել կարճ ժամկետում, առանց դրանց գործառնական նշանակությամբ շահագործումը դադարեցնելու, ինչն իր հերթին բերում է շինարարական աշխատանքների համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների զգալի խնայողության:

55. Այդ նպատակին կարող է ծառայել նաև շենքերի սեյսմակայունությունը բարձրացնող այլ մեթոդների կիրառմամբ շենքերի վերակառուցումը: Սեյսմակայունությունը բարձրացնող մեթոդները կիրառություն կարող են ստանալ անհրաժեշտ ծավալով փորձարկումների իրականացման ժամանակ ստացված դրական արդյունքների հիման վրա՝ նորմատիվատեխնիկական փաստաթղթերում համապատասխան դրույթներ ամրագրվելու դեպքում:

56. Շենքերի վերակառուցման ժամանակ կոնստրուկցիաների ուժեղացման մեթոդն ընտրելիս, յուրաքանչյուր առանձին դեպքում, անհրաժեշտ է հաշվի առնել բեռնվածքների մեծությունը և կոնստրուկցիայի տեխնիկական վիճակը, մեթոդի յուրացվածությունը, տեխնոլոգիամետոությունը, տնտեսական նպատակահարմարությունը, դրա կիրառման դեպքում կրողունակության պահանջվող մակարդակին հասնելու և օգտագործելի տարածքների չափերը պահպանելու հնարավորությունը: Յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է հաշվի առնել վերակառուցման աշխատանքների կատարման որակի հսկողության իրականացման և շահագործման ընթացքում տեխնիկական սպասարկման հնարավորությունը:

57. Շենքերի վերակառուցման միջոցառումները պետք է նախագծվեն անհրաժեշտ ծավալով իրականացված հետազննությունների արդյունքների հիման վրա, նախագծերը պետք է սահմանված կարգով ենթարկվեն փորձաքննության, իսկ աշխատանքներն իրականացվեն հեղինակային հսկողության և շինարարության որակի տեխնիկական հսկողության ներքո:

58. Ընդհանուր առմամբ՝

1) անհրաժեշտ է խրախուսել բոլոր այն մեթոդները, որոնք կապահովեն շենքերի սեյսմակայունության բարձրացումը և սեյսմիկ խոցելիության նվազեցումը,

2) հրաժարվել մեթոդների մասսայական պարտադիր օգտագործման գաղափարից և գոյություն ունեցող յուրաքանչյուր առանձին շենքի համար կիրառել անհատական մոտեցում,

3) գոյություն ունեցող շենքի սեյսմակայունության բարձրացման մեթոդն ընտրելիս հաշվի առնել շենքի կոնստրուկտիվ համակարգը, սեյսմակայունության և սեյսմիկ խոցելիության մակարդակները և տեխնիկական վիճակը,

4) անհրաժեշտություն առաջանալու դեպքում միջոցներ հայթհայթել շենքերի տարբեր տիպերում առաջարկվող մեթոդների կիրառմամբ մոդելային փորձարկումներ իրականացնելու համար,

5) գոյություն ունեցող յուրաքանչյուր կոնկրետ շենքի համար ստեղծել մասնագիտական հանձնաժողով և որոշում կայացնել սեյսմակայունության բարձրացման ուղղությամբ առաջարկվող տարբերակներից տեխնիկատնտեսապես առավել հիմնավորված տարբերակի ընտրության վերաբերյալ:

X. ՇԵՆՔԵՐԻ ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ՄԻՋՈՑԱՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

59. Շենքերի սեյսմակայունության ապահովմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորման աղբյուրներն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն,
- 2) տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները,
- 3) հիմնադրամները,
- 4) դոնոր երկրների ու միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերը, դրամաշնորհները.
- 5) տարբեր կազմակերպությունների և անհատ քաղաքացիների նվիրատվությունները,
- 6) սեփականատերերի միջոցները,
- 7) օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

XI. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

60. Շենքերի բնականոն և անվտանգ շահագործումն ապահովելու գործընթացում մեծ նշանակություն ունի դրանց սեփականատերերին և այլ պատկան մարմիններին երկրաշարժի վտանգի և սեյսմիկ ռիսկի մեծության, շենքերի կոռոզ կոնստրուկցիաներին անօրինական միջամտության անթույլատրելիության և դրա հնարավոր հետևանքների, շենքերի պահպանման պարտադիր նորմերի կատարման անհրաժեշտության, վերականգնման ու ուժեղացման միջոցառումների կարևորության մասին մշտապես իրազեկումը, ինչը կնպաստի բնակչության կողմից շենքերի սեյսմակայունության ապահովման կարևորության ընկալմանը և ինքնուրույն որոշումների կայացմանը, թույլ կտա նրանց ներգրավել կուտակային ֆոնդի ստեղծման և իրականացվելիք ծրագրերին մասնակցության գործընթացին:

61. Իրազեկման միջոցներն են՝

- 1) մարզերում, համայնքներում սեմինարների և հանդիպումների կազմակերպումը.
- 2) տեղեկատվական նյութերի հրապարակումը.
- 3) զանգվածային լրատվությունը:

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2013 թ.
 դեկտեմբերի 26-ի նիստի N 53
 արձանագրային որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ ՍԵՅՄԱԿԱՑՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՅՏԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը
1	2	3	4	5	6
1	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանով հաստատված և գործողության մեջ դրված ՀՀՇՆ II-06.02-2006 <<Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր>> շինարարական նորմերի վերանայում և արդիականացում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Ըստ Հայեցակարգի 59-րդ կետի	Ըստ ֆինանսավորման	Շենքերի և շինությունների նախագծման որակի բարձրացում, սեյսմակայունության ժամանակակից նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման խթանում
2	<<Շենքերի և շինությունների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում	2014թ.	Շենքերի և շինությունների վերակառուցմանը, վերականգնմանն ու

	դրույթներ»» շինարարական նորմերի հաստատում				ուժեղացմանը ներկայացվող նորմատիվային պահանջների հստակեցում և բարելավում
3	«Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ու անձնագրավորման և Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի N 346 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»» «Հայաստանի կառավարության որոշման նախագծի մշակում	«Հայաստանի Հանրապետության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում.	2014թ	«Հայաստանի Հանրապետության դաշտի բարելավում
4	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին»» N 1161-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»» «Հայաստանի կառավարության որոշման	«Հայաստանի Հանրապետության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում	«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին»» «Հայաստանի Հանրապետության դաշտի բարելավում	«Հայաստանի Հանրապետության դաշտի բարելավում

	նախագծի մշակում				
5	<p>«Կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում ինժեներական հետազննման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 788-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» «Կառավարության որոշման նախագծի մշակում</p>	«Քաղաքաշինության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում.	2014թ	«օրենսդրական դաշտի բարելավում, ինժեներական հետազննում գործունեության տեսակի լիցենզավորմանը ներկայացվող պահանջների հստակեցում
6	<p>Շենքերի վերաբերյալ անձնագրային տեղեկատվական տվյալների և կոնստրուկտիվ բնութագրերի հավաքագրում և տվյալների տեղեկատվական համակարգչային բազայի ստեղծում</p>	«Քաղաքաշինության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում	Շարունակական	Տվյալների շարունակական համալրվող բազա, որը հիմք կհանդիսանա շենքերի նկատմամբ ցուցաբերվելիք մոտեցումների հստակեցման նպատակով անհրաժեշտ վերլուծությունների կատարման համար
7	<p>Շենքերի սեյսմակայունության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի մշակում</p>	«Քաղաքաշինության նախարարություն, «Արտակարգ իրավիճակների նախարարություն, «Մարզպետարաններ,	Ֆինանսավորում չի պահանջվում	սկսած 2015թ-ից	Շենքերի սեյսմակայունության բարձրացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում

		ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)			
--	--	---	--	--	--